2(983). Իմ ըրեխանցը մատաղ ըլեմ:

3(984). Ղաքիտ մեռնեմ:

4(985). Մատաղ քե:

5(986). Մեռնեմ սըհանց:

6(987). Ոտիտ տակն ընգնեմ:

7(988). Ցավըտ տանեմ:

8(989.) Քու ոտի տակի թոզը տանռնամ:

ԵՐԳՈՒՄՆԵՐ

1(**990**). Ես հացիցն եմ խնդրել, որ...

2(991). Ըրեխանցս արևը:

3(992). էն աստոծը:

4(993). էն խաչը վկա:

5(994).Իմ ախպոր արևը:

6(995).Իմ հորն ը մոր կերեզմանը:

7(996).Հորըս արևը:

8(997).Հորըս կերեզմանը:

9(998).Սուտը մեռնի:

10(**999**).Վա՜յ, ֆուքի:

11(**1000**).Քոռանամ, թե սուտ եմ ասըմ:

ԳԱՂՏՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(**1001**). Այսինչը (Ըռաքելը) չարը դ տարավ:
(Իջևանում հանգուցյալի մահը գուժելիս չեն ասում մեռավ):

2(1002). Ծողնոտի վրա ծնված[1]:

3(1003). Մոլլի խարջը տալ[2]:

ԱՐԳԵԼՔ-ԲԱՆԱՋԵՎ

1(**1004**). Ով որ խոսա՝ խոստոփ անի,
Սկեընկլիրը կորտոփ անի:

2(**1005**). Ով որ խոսա՝ խոստոփ անի,
Կադանի[3] կ...-ը կորտոփ անի[4]:

ԱՆԵՐՔՆԵՐ

1(1006). Ա՛ ազըզամեռ:

2(1007). Ա՛ բեմուրազ:

3(1008). Ա՛ գյուլլեն նրա ոռը մտնի:

---

[1] Վաղ ժամանակներում աղքատ կանայք ծննդաբերում էին ծղոտի վրա, որովհետև հնարավորություն չունեին կտոր գնելու: Հետագայում «ծղոտի վրա ծնված» արտահայտությունը տրվում էր այն նորածինին, որի մայրը ծննդաբերության ժամանակ մահանում էր: Հավանաբար ծղոտի վրա ծննդաբերելը նաև ընչազրկություն էր նշանակում, և այդ հատկանիշը փոխանցվում էր նորածնին, որը զրկվում էր մորից: Ըստ բանասացի՝ այս արտահայտությունը Իջևանում տարածված է եղել, և իր հորեղբոր աղջկան նույնպես կոչել են «ծղնոտի վրա ծնված», որովհետև նրա մայրը ծննդաբերության ժամանակ մահացել է (ծանոթ. բանասաց Ե. Սիմոնյանի):

2 Իջևանում այս այլաբանական արտահայտությամբ երեխային կամ որևէ մեկին առավոտյան հարցնում են՝ «Քյանցիր մոլլի խարջը տըվի՞ր»: Այսինքն՝ ցանկանում են իմանալ երեխան զուգարան գնացել է՞ փորը թեթևացնելու համար, թե՞ ոչ:

[3] Կադան - տղամարդու անուն է (ծանոթ. բանասացի):

[4] Այս բանաձևն ասվում է տըփնուկի (պահմտոցի) կամ այլ խաղի ժամանակ, որպեսզի խաղի մասնակիցները չխոսեն, այլ լռություն պահպանեն; Այս յուրօրինակ տաբու-բանաձևը կարող է ասվել նաև այլ անուններով, այսինքն՝ երկրորդ տողի առաջին բառը կարելի է փոխարինել կենդանիների (էշ, շուն և այլն) և ծանոթ մարդկանց անուններով; Այս բանաձևն ասվում էր նաև քնելուց առաջ, որ երեխաներն անկողնում չխոսեին (ծանոթ. բանահավաքի):

4(1009). Ա՛ եթիմ անդեր շուն:

5(1010). Ա՛ հորդ ըռխին ք...եմ:

6(1011). Ա՛ ղըլղըլցնես, ա՛ պըռանչես:

7(1012). Ա՛ մաղբուն շուն:

8(1013). Ա՛ նրա քմակին մոծուկ տուս կյան, լապատկով պատռեն:

9(1014). Ա՛ սև լաչակ քցեմ կըլխիտ:

10(1015). Ա՛ քու բալենիքը թաղեմ:

11(1016). Ա՛ քու մարքն ու տղեն մեռնի:

12(1017). Ա՛ ֆողեմ քե պես հարսին:

13(1018). Ազարը քե տանի:

14(1019). Անդեր շներ:

15(1020). Աչկերըտ պիծլակի[1]:

16(1021). Աչկերըտ տուս վազի:

17(1022). Ասեղը բոշըտ մտնի:

18(1023). Ասեղը տընգես տակին շվաք անես:

19(1024). Աստծը նրան տանի:

20(1025). Աստծը քար քցի նրա կըլխին:

21(1026). Ատակն ընգնի:

22(1027). Արին ճուրը ջանիցըտ քցի:

23(1028). Արինըտ ջանիցըտ քցի:

24(1029). Բեխոխորթ ըլելս:

25(1030). Բեխուխուրթ մնա:

26(1031). Բեյմուրազ:

27(1032). Բըխտըղարա ըլես:

28(1033). Բոյդ թել չափեմ:

29(1034). Բոյըտ տափին տընեմ:

30(1035). Գյուլլեն դիպչի:

31(1036). Գյուլլեն նրան տանի:

32(1037). Գյուլլեն քե դիպչի:

33(1038). Գյուլլեն ջիգյարըտ խառնի:

34(1039). Դուշկյուն կենաս մի կողքիտ վրա, որ մի կողքըտ ծակվի՝ մյուս կողքիտ վրա:

35(1040). Ենդարի կյանս:

36(1041). Ես քըվթառել եմ, տուս էլ ջահել մեռնես:

37(1042). Ես քու մարքը թաղեմ:

38(1043). Ջանիրմանը:

39(1044). Ջանիրմանը քեզ:

40(1045). Էն հիտլերականնին, էն դավաճանին, ֆողեմ ես նրանց կյլուխը:

41(1046). Էն ո՞վ ա էն մըրթամեռը:

42(1047). Էրեցը քե տանի:

43(1048). Թագըտ մասըրքովը քցեմ: (Հարսանեկան քողը նկատի ունի, այսինքն՝ մեռնես և այլևս թագի կարիք չզգացվի):

44(1049). Թաղեմ նրա մարքը:

45(1050). Թաղեմ քու տերը:

46(1051). Թյուգունքըտ սևանա:

47(1052). Թոփը ծեր միչին պանց ըլի:

48(1053). Թոփը նրա վրան տրաքի:

49(1054). Թոփի գյուլլեն տանի քեզ:

50(1055). Թոփի ըռեխը ընգնի նա

51(1056). Թոքերը ծակվի:

52(1057). Թոքերը կողքիցը կպչի:

53(1058). Թռչես տափեն կենաս:

[1] Պիծլակի - հավանաբար՝ փոքրանա (ծանոթ բանահավաքի):

54(1059). Թուգունքըտ տափիցը կըպչի, ռեշնի:

55(1060). Ի՜, բխտըղարա, բխտըմճուճ ըլես:

56(1061). Ի՜, թոփի ռեխը ընգնես:

57(1062). Ի՜, նրանց լեզվի տակին ռակ տուս կյան:

58(1063). Ի՜, քոռանաս, պատեպատ անես:

59(1064). Իմ ամանը ծեր աչքերնուն փռնի:

60(1065). Ի՞նչ ես ուզըմ ինձանից, ա՛ բալամեռ:

61(1066). Իրեսներնուն ծռվի, ընգնի քամակը:

62(1067). Լաչակըտ թըխի կարասը քցեմ[1]:

63(1068). Լուզվի տակին դոխկըզդոնի տուս քցի:

64(1069). Լուզվիտ տակին ոսկուռ տուս կյան:

65(1070). Խըռըզնըհատ ըլես:

66(1071). Խի՞ ես մատդ յախես քցըմ:

67(1072). Խոր քյնաս:

68(1073). Խոր քնեն կյաս: (Այսինքն՝ մեռնես):

69(1074). Խոր քունը կյլխիտ ընգնի:

70(1075). Խուլյար ընգնես:

71(1076). Խուկին բուգը մտնի:

72(**1077**). Ծաղիկը նրա տանի:

73(1078). Ծեզ պեսների կաշին շլնքովս պատ տամ:

74(1079). Կախ ըլես, կախ:

75(1080). Կըլըխկոնձի տալով քյնա՛:

76(1081). Կըռնըմըտ փիլթա պան անի:

77(1082). Կիսամուրազ մնաս:

78(1083). Կլխամեռ ըլես:

79(1084). Կյանքդ ռեշնի:

80(1085). Կնիկդ ծննդկան ըլի,
Տանդ հաց չըլի,
ճըղացիդ հերթ չըլի,
Տունդ էլ կաթիլիս ըլի:

81(1086). Կոխկերքդ ծակվի:

82(1087). Կոխքերըտ տզզա, արեն ճուրը ջանիցըտ տուս կյա՛:

83(1088). Կռնիտ տակին փիլթեն պան անի

84(1089). Կրակվես տու[2]:

85(1090). Կուլըդ (ուսկամբ) կարմիր թաղեմ:

86(1091). Հերը թաղածը:

87(1092). Հերըտ թաղեմ:

88(1093). Հընգըրծակի կյա՛ս:

89(1094). Հողեմ կյլուխտ:

90(1095). Հողըս կըլխիտ:

91(1096). Ձին (ձյուն) գա ոռիտ:

92(1097). Ղուբետ նախշեմ, ցից տնեմ:

93(1098). Մահը բուգըտ մտնի:

94(1099). Մահրըմ ըլես:

95(1100). Մաղբուն ըլես տու:

96(1101). Մանգգիլըտ կըրճանա:

97(1102). Մեծ քնեն կյաս:

98(1103). Մըրըզնիան ըլես:

99(1104). Մի ճուխտ մաշկով օխտը տուն մտնես:

---

[1] Թըխի կարասը քցել - որ մարթը մեռնի, թըխի կարասն ա ընգնըմ էլի, թուխ անըմ ա, կըլխին քցըմ (ծանոթ. բանասացի):

[2] Ասում են այն մարդուն, ով փորձում է իր ուժերից վեր ինչ-որ գործ կատարել: Սա նաև զարմանքի արտահայտություն է:

100(1105).Մուրազը փորիտ մեռնես:

101(1106).Մուրազըտ փորըմըտ մնա:

102(1107).Մուրզրհան ըլես:

103(1108).Յաման-յարա ըլեն:

104(1109).Յանա-յանա անես:

105(1110).Նա ղըլղըլըցնի, պըռանչի:

106(1111).Նիկոլը[1] ղաքիտ քյնա:

107(1112).Շիվանի ընգնես:
(Այսինքն՝ դժբախտության հանդիպի և ողբա):

108(1113).Պըռանչի, տափիցը կպչի:

109(1114).Պռուկը քեզ տանի:

110(1115).Զանըտ մեռնի:

111(1116).Սաղ օրը տանը նստած՝ ես ըշխատել եմ, չըրչարվել եմ, ա՛ տնաքանդ:

112(1117).Սրտմըտ ռակ տուս կյա;

113(1118).Սրտիտ քըթալըմը յաման յարա տուս քցի:

114(1119).Սրտիտ քըթալըմը ոսկուռ տուս քցի:

115(1120).Սուգասունըդ ռեշնի:

116(1121).Սուգասունըդ ֆոտի:

117(1122).Սուգասունըհան ըլես:

118(1123).Սև գյանքի կենա:

119(1124).Սև գյանքի կենան էն մե-մեծ կնանիքը:

120(1125).Սև շորըմ կենա նա:

121(1126).Սև ֆողին գերի քյնա:

122(1127).Սևլանչակ ըլես:

123(1128).Վայ շաշ կըլխիտ:

124(1129).Տանչես, պերանովըտ հաչես:
(Այսինքն՝ շան նման կատաղես և հաչես):

125(1130).Տատկանց[2] տների տակը քյնաս:

126(1131).Տափը թումբ անես:

127(1132).Տափը ծակվի՝ մեչը մտնես

128(1133).Տեղին ճուրը ջանիցըտ տուս քըցի:

129(1134).Տերտերը ղաքիտ քյնա:

130(1135).Տըհանց ազիզը մեռնի:

131(1136).Տըռներիցը փուշի հվաքես:

132(1137).Տիրունչ տունը քանդվի:

133(1138).Տո՛, խըռխըռացնես:

134(1139).Տո՛, տզզաս՝ աչքըտ պանց:

135(1140).Տո՛, քու կնիկը մարթու քյնա:

136(1141).Տո՛, փիլթըկալես:

137(1142).Տու միսս ուտես, բալա ջա՛ն:

138(1143).Ցեխս կըլխիտ:

139(1144).Ցըխեմ կյլուխըտ:

140(1145).Ցըխեմ տրա կյլուխը:

141(1146).Փըրսող անես:

142(1147).Քանդվի քու տուս եկած ճամփեն:

143(1148).Քար ընգնի շաշ կըլխիտ:

144(1149).Քարե-քար ընգնես:

---

[1] Ռևազլուում թաղման թափորի առջևից միշտ դագաղի կափարիչը տանում էր Մանուչարյան Նիկոլը: Այդ հանգամանքը հիմք է ծառայել այս անեծքի համար (ծանոթ. բանահավաքի):

[2] Տատկանց տների տակը - Դիտավանի գերեզմանատունը գտնվում է գյուղից դուրս՝ Տատկանց տներից ներքև: Այս անեծքը միայն դիտավանցին կարող է օգտագործել: Նշանակում է՝ թաղվել Տատկանց տներից ներքև (ծանոթ. բանահավաքի):

145(1150).Ք...ի շունը քու վարդալյոսի[1] ըռխին:

146(1151).Քու ազիզըտ թաղեմ:

147(1152).Քու ազիզըտ մեռնի:

148(1153).Քու մարթը թաղեմ:

149(1154).Քու մարթի կնիկը թաղեմ:

150(1155).Քու մոր բալեն թաղեմ:

151(1156).Քու տրունչ ադինձը ընգնես; (Ասում են հավերին):

152(1157).Օխտը տըռնով կըպչես:

153(1158).Ֆողեմ նրա կյլուխը:

154(1159).Ֆողեմ ծեր պարագիտացած կլուխներնուդ:

155(1160).Ֆողեմ կյլուխըտ:

156(1161).Ֆողեմ քու փողոցային, անպետքը, սպեկուլյանտ կյլուխը:

157(1162).Ֆոտըտ կըտրի (Հոտըտ կըտրի[2]):

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

1(1163). Թոխա յա, որ պտիտ դի կյալ, Կյլուխ դի, որ պուկ դի կյալ:

2(1164). Քիչ պերանըտ վեր ըղողի: (Այսինքն՝ քիչ հայհոյի և վատ արտահայտություններ արա):

3(1165). Քյնալ դեմ մազերը պուկիլ:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1(1166). Հիպլի Պիպոս՝ չարթի պուն, Եվի կմթնի, քյամ մեր տուն:

2(1167). Կետի ղոլին մի աղվես կա, Ես չիր ուտեմ, նա՝ կճիր, Նա կճիր ուտի, ես՝ չիր:

---

[1] Վարդալյոսի - այսինքն՝ քու լավ, վադի (ծանոթ. բանասացի):

[2] Այսինքն՝ մեռնես: Յուրաքանչյուր մարդ ունի իր յուրահատուկ հոտը, որը մահվան հետ անցնում է (ծանոթ. բանահավաքի):